

16.04.2020թ.

Ժ.16:00

*Մասնակցում էին՝ Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ն.Բաղդասարյան, Ա.Սաֆյան, (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)  
Հրավիրված էին՝ Ա.Հարությունյան*

**Օրակարգի նախագծում երկու հարց.**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 24-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Զեկույցող՝ Ա.Հարությունյան /*

2. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 24-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Զեկույցող՝ Ա.Հարությունյան /*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հունվարի 29-ի թիվ 03-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 24-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետով հաստատված հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի.

2. Որոշման 2-րդ կետով հաստատված հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2-ի:

*/Անհատական/*

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ